

–Շատ լաւ: Չհասկնաք թէ ես թաղականը չտապալելու կողմն եմ. ես ալ կ'ուզեմ որ տապալուի, բայց...

–Երկար մի՛ ըներ, օխա մը ձկան իւղ տուր ինձի:

–Ձեր ալ սիրտը կոտրել չեմ ուզեր... կաշխատիմ այս գիշեր մէկ աղուոր պատուական եւ ընտիր յանցանք մը գտնել եւ անով տապալել թաղականը, բայց պայմանաւ մը...

–Այսինքն մէկու բան չըսենք:

–Ո՛չ...: Սա պայմանաւ, որ եթէ ասկից վերջը հիւանդանալով դեղ գնելու ստիպուիք՝ իմ դեղարանս հրամմէք:

–Պարտքերնիս է, եղբայր, այս գիշերուընէ բոլոր բարեկամներուս կ'ըսեմ, վաղուընէ անդին հիւանդանան եւ հոս գան դեղ առնեն. հիւանդ չեղած ատեննին ալ թող գան առնեն. էֆէնտիմ, ի՞նչ կ'ըլլայ եղեր... պարապ տեղը հազարումէկ բանի ստակ կտրուի կոր...

–Շնորհակալ եմ:

–Մնաք բարով:

–Երթաք բարով:

Հետեւեալ օրը կոիւր կծագի թաղին մէջ. թաղեցիներէն խումբ մը պատուաւոր ազգայիններ փայտերով զինուած՝ Թաղ. խորհրդարանի վրայ կյարձակին եւ թաղականներուն մէկուն ոտներէն, միւսին մօրուքէն, մէկալին ականջէն քաշելով խորհրդարանէն դուրս կը հանեն: Պատրիարքարանը եղելութիւնը կ'իմանայ եւ հրահանգ մը կ'որկէ, որ *նկատելով, որ* լոկ կսկսի եւ *խորհուրդ լուծեալ* է լոկ կը վերջանայ:

Ինչ որ կ'պատմենք հոս՝ տարին հինգ վեց անգամ կ'պատահի այս թաղին մէջ: Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր չէ եղած թաղական մը, որ իր պաշտօնավարութեան ամբողջ շրջանն լրացուցած ըլլայ: Առժամանակեայ թաղական խորհուրդ մը մէկ քանի տարի պաշտօն կը վարէ երբեմն: Եւ ոչ մի թաղական խորհուրդ կանոնաւոր հաշիւ կրցած է տալ այս թաղին մէջ. թաղեցին ալ թաղական խորհուրդ ընտրելէն զուխը քերելու ժամանակ չունի, որ հաշիւ պահանջէ եւ առնէ: Հինգհարիւր քսանեւհինգ տուն հայ կայ հոս, վեցհարիւր երեսուն քուէարկու եւ երկու հազարի մօտ բնակիչ... բայց երբ թաղականի համար քուէ տալ հարկ ըլլայ՝ քուէարկուներու թիւը վեց հազար կ'անցնի. ա՛լ հասկցիր, թէ մէկ հոգի քանի՛ քուէ կու տայ հոս. Մէլամսըզցի շատ շոյլ է... քուէի մասին: